

ՎԱՀԱՆ ՄԻՒՍԱԽՈՐԵԱՆ

ԱՆԶԱՏԱԿԱՆ ՆԵՐԸ

ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐ

Տարիներ յետոյ դրել անջատականների մասին, առանց վերլիշելու ընդհանուր դրութիւնը, ժամանակներն ու տրամադրութիւնները՝ հնարաւոր չէ:

Կովկասահայութիւնը դիմաւորեց մեր դարը՝ երկունքով։ Արդէն նախորդ դարի վերջին տասնամեկում ոռուս կառավարութեան հալածանքները զգալի էին դարձել։ Ծխական գպրոցների փակումը, մշակութային հաստատութիւնների դէմ յարուցւած հալածանքը, ծանր գբարքնանութիւնը, եւ այլն ակներեւ էին դարձնում ոռուսացման քաղաքականութեան սասակացումը։

Հալածանքները հակադարձութեան տրամադրութիւններ էին ստեղծում։ Աւ մեր լիշողութիւնների մէջ դեռ թարմ է, թէ ինչպէս եկեղեցիում ազօթողներին «խրոչեցնող» քարոզներ էր ասում Գանձակի առաջնորդ Թաւաքալեան վարդապետը, ինչպէս «մայրենի լեզու» ուսուցանելու խմբել էին կազմում, խմորատիպ թերթեր էին լոյս տեսնում եւ այն։ Կրաւորական դիմաւութեան այս տրամադրութիւնը ընդհանուր էր կովկասահայութեան մէջ ամէն անդ։ Մինչեւ որ հասան եկեղեցական կալւածքների գրաւման դէպքերը, երբ հայ ժողովուրդը իր կրաւորական դիմաւութեան դիրքերից դուրս ելաւ ու իրեն նետած ճենոնցը ընդունեց։ Այս դէպքերով ահա սկսում է ներուժ տրամադրութիւնների մի շրջան, երբ կովկասահայութիւնը, կարճ ժամանակւայ ընթացքում, հսկայական քայլերով յառաջադիմում է կեանքի բոլոր առաջարկներում։

Հայագիտութեան, հայասլաշտպանութեան շարժումը դառնում է տիբրական, ինքնուրոյն, թարգմանական գրականութիւնը, հակառակ բոլոր հալածանքների, սկսում է աճել. այսող ու այնտեղ նորից նոր բունում էն մշակութային-կրթական միութիւններ, ինչպէս Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը, թիֆլիսի Հայուհեաց Ընկերութիւնը, կրօնա-Փառմական թանգարանը, Հայուհեաց Արքախնամ Ընկերութիւնը, Բագրի Հայոց Կուլտուրական Միութիւնը, չքառար Երեխաններին օգնող «Լոյս» ընկերութիւնը, Կովկասեան Հայ Աշակերտական Միութիւնը, Հայոց

Դարպայների Ուսուցիչների, Վարդուհիների Միութիւնը, Ազգա-
դրական Ընկերութիւնը, Բարեգործական Ընկերութիւնը եւայլն:
Միաժամանակ մի շարք, իրար յետեւից տեղի ունեցող
Համազգային դէմքերի կորուստները լարում ու պրկում են տրա-
մադարձային — Սլիշան, Երիցեան, Սրբար Յովհաննիսեան,
Քր. Միքայէլեան, Խրիմեան, Պոչշիպիլ եւ այլն...

բր. Օլքայիշևա, տէլուռակա, մանկապահածութեան
բայց անհամեմատ աւելի մեծ էին կովկասահայութեան
նուածումները յատկապէս տնտեսական բնագատառում : 1901թ.
Թէֆիլիսի 7929 տանտէրերից 4026ը հայեր էին : Հայերի շնչքերը
իրենց արժէքով մի քանի անգամ գերազանցում էին բոլոր մա-
շած շնչքերը : Բաղւում 5000 բուրդից բարձր եկամուտ ունեցող
բոլոր շնչքերից 19ը պատկանում էր սուսներին, 117ը՝ թուրքե-
րին եւ 126ը՝ հայերին : Անդրկովկասի առեւտրական բոլոր ճիւ-
ղերում եւ ամէն տեղ գերազանցութիւնը հայերի կողմն էր : Եւ
որքան բարձր էին ձեռնարկութիւնների դրամագլուխիները, այն-
քան հզօր էր հայերի գերազանցութիւնը : Բագէի բոլոր խոշոր
առեւտրական ձեռնարկութիւնների կէսը պատկանում էր հայե-
րին : Անգամ Բաթումի խոշոր առեւտրական ձեռնարկութիւնների
մէջ առաջնութիւնը հայերին էր*) :

«Հայերի մասնակցութիւնը Բագրի նաւթարդիւնաբերութեան մէջ գերակշխո էր սկզբից»: Իսկ 1902թ. նաւթարդիւնաբերական բոլոր խոչոր ձեռնարկութիւնները միասին արտադրել էին 521 միլիոն գումար՝ ձեռնարկութիւնները՝ հայերը: Առև Քաղաքի նաւթամշակ 33 առաջնակարգ գործարաններից 9ը հայկական էր, արտադրութիւնը՝ ամբողջի մէկ քառորդից աւելին: 1873 թւին Բագրի մէջ կար ընդամենը 747 հայ բնակիչ, զարգերջին՝ 51,340: 1902 թւին Բաթումից արտահանւած նաւթամշերը 24 առկոսը պատկանում էր հայերին: Անդամ Կովկասի սահմաններից գուրս նաւթի արդիւնաբերութեամբ, վաճառումով և փոխադրութեամբ զբաղող 129 բաժնեարական ընկերութիւններից 28ը հայկական էր՝ 76 միլիոն բուրփի գրամագլւոր (թրոներից 3, վրացական 1, դրամագլւուխները՝ 5 միլ. եւ կէս միլիոն քական 3, վրացական 1, դրամագլւուխների ուժ եւ մե-

Հայ բուրժուազիան այլեւս խստ պատկառելի ոյժ եւ սե-
ծութիւն էր կովկասում։ Անհերքելի մեծութիւն էր նաեւ հայ
բանուրութիւնը։ 1904թ. տւեաներով, Բաղդի նահանգում կային
35,835 արհեստավոր, "որից 9273ը հայեր էին։ Նաւթարդիւնարե-
րութեան մէջ զբաղմունք ունէին 11,217 հայ բանուր եւ ծառայող-
ներ, որ կազմում էր ընդհանուր գումարի 24,4 տոկոսը։ Թիֆ-
ներ, որ կազմում էր ընդհանուր գումարի 2735 էր բանու-
թիւնի արհեստավորութեան եւ ծխախոտագործարանների բանու-
թեան կէսից աւելին հայեր էին։ Ղարաբաղի մետաքսագոր-
րութեան մէջ աշխատող հայ բանուրների գումարը 2735 էր
ծարանների մէջ աշխատող հայ բանուրների գումարը 20-25 հազարից պակաս չէր։
Գումար հայ բանուրութեան թիւը 20-25 հազարից պակաս չէր։

*) Դ. Անահոռն, «Բուսահայեթ Հասար. Զարդացումը», Հատ գ. էջ
420-23:

Մոտաւոր-բարոյական վերելքի, տնտեսական փարթամութեան, դասակարգերի ձևաւորման այս անհամըլնթաց շրջանում, Հայ նախկին միապալաղաղ կեանքը սկսել էր տարուբերել, շերտաւորմել, ճեղքածածքներ տալ: Նոր օրերի, նոր գործերի շրջան էր բազում...

Եւ ուժերի, նախարարամաղբութիւնների զարգացման այս շրջանին էր, որ զուգաղիսկեց ոռոսական առաջին յեղափոխութիւնը:

11

ԱՐԱՋԻՆ ԱՆՁԱՏՈՒՄԸ

Քաղաքից դուրս, «Վոլչի վորոտ» դաշտի վրա՝ բարձրագալ ամբողջ կերպարանափոխւած յեղափոխականներ, ճառակ, զօրքեր, ծովածաւալ շարժումներ... Գործարաններ, բանտուրներ, տօթ ու փոշի, տասը սոց-գենովիլատ ու մէկ-մէկ դաշնակցական, հնչակեան, վէճ, մրցում — աշխատանքը, դրամագլուխը, «աղքային հարցը», բանուրը...»

Բագրում եւս ցոյցեր ու թափօններ . Հերարձակ մազերով
դրօշակակիբ հրէուժի... «Հի՞նչ ապլանէլ», «բռնտ ա, բռնտ,
դալօ՛յ սամադրծանի»... «մաշալ-լա՞՛շ»... Կողակներ, մարակ,
իրարանցում, կառքեր, սատիկաներ, մի մարդ՝ քթից հոսող
արիւն...

Պարապետ, և կեղեցիքի. մի քանի զոյլ աղօթող. Անանիա արքակիսկոպոս. կերկերուն լաց ու քարոզ ասասանեալ ժամանակ-ներից մասին . . .

Եկեղեցու բակ եւ խուռներամ բազմութիւն. անվերջ վեճեր՝ «մոռնենալը», աղդ, «Զիֆոն», դասակարգ, «Հող եւ աղատութիւն», Մարքս, էնդելս, կապիտալիզմ, «բանուրն ու գիւղացին», Դաւիդ, «Կապիտալի երրորդ հասոր», էջը. Պիէր Քիար, Պրէսսաննէ, Մշոյ դաշտ, Սասուն, «ի՞նչ է Դաշնակցութիւնը», «մի կոլուսալ կոնդլումերատ»... Ու, յանկարծ, կողեց մի ապահու ու ծանրախոնչ ծանուցում. «Հայերէն խօսի՛ք, շա՞ն որդի՛»...

Այս այլ ժամանակները, երբ սկսեց խորուել անջատական շարժումներ :

Յայնի է, որ, փոքր ի շատէ, տեւական բնոյթ ունեցող հասարակական շարժումները մէկէն ի մէկ չեն ծնուռմ։ Անջատական շարժումն էլ ունի իր նախապատճեմի թիւնը։

«Դեռ եւս 1899—1900 թւականներին գաշնակցական երիտասարդշրջաններում խօսակցութիւններ էին լինում «կովկասեան գործունէկութեան» մասին, այսինքն, այն ժամանակ, երբ գեռեւս սոցիալ-դեմոկրատիա կովկասում, կամ գոնէ Հայկական Կովկասում, գոյութիւն չի ունեցել», պատմում է Մոռաւեանը: «Դեռեւս 1901թ., այն ժամանակ, երբ Հազիւ մի քանի սոց.-գեմոկրատ անհատներ կային Բագրում, մի քանի ընդդիմադիր գաշնակցա-

կանաներ հրատարակեցին մի թուղթիկ, որտեղ շեշտաւծ էր «կովկասեան գործունէկութեան» անհրաժեշտութիւնը։ Այդ թուղթիկից, սակայն, միայն մի քանի օրինակներ տարածւեցին, որովհետեւ մեծ մասը ընկնելով Դաշնակցութեան կենտրոն։ Կոմիտէի անդամների մօտ, պատահաբար, ինչպէս ասում են, այրել էր վառարանում։ Արդեօք պատահաբար էին նրանք ոչնչացել, թէ դիտմամբ, ևս չգիտեմ, սակայն, մի բան հաստատ գիտեմ, որ կենտրոն։ Կոմիտէն լսել անդամ չէր ուզում այդ թուղթիկի մասին եւ ամէն միջոց ձեռք առաւ, որպէսզի երիտասարդները այդպիսի «յիմարութիւններ» այլեւս չանեն։ այդ թուղթիկի հեղինակները մինչեւ հիմա Դաշնակցութեան մէջ են»*):

Սրբագույղ արդէն որոշ գաղափար ենք կազմում «կովկասեան գործունէութեան» հարցի ծագման եւ տիրող տրամադրութիւնների մասին։ Գաղափարը մէկ փորձով չլրիպեց։ Եկեղեցական կալւածքների գրաման դէպքերը, թէեւ կապ չունէին «տեղական գործունէութեան» հարցի հետ եւ հանդէս եկան ուրոյն եւ յատուկ շարժման ձեւով, բայց տարածեցին յեղափօխական վարակը հայ ժողովրդի լայն խաւերում։ մարդիկ դործով համոզւեցին, որ «ոռուս թափառի» դէմ կուի ենելը այնքան էլ աշեղ ու սարսափելի բան չէ։ Յանդառութիւնը աճեց, ինքնավատահութիւնը զարգացացաւ։

Այդ խումբը անջատեց Դաշնակցութիւնը և էլ կլոք գրած Սոց-Դեմ. բանուրական հայ կազմակերպութեան, 1903 թւի Հոկտեմբերին։ Խմբի մէջ կային զնահատելի ընկերներ, ինչպէս Նարիման Տէր Ղազարեանը, Աղեքսանդր Մատուրեանը (Մուրէնի), որոնք յատկապէս սիրուած էին դաշնակցիան Երիտասարդուների, աշակերտների կողմէց։ Բայ Մաւեանի «Դժողովների թրումին էր և հանգուցեալ Մարգար Ժամհարեանը, որը, սակայն, մնաց Դաշնակցութեան մէջ»։ («Դաշնակց. Կրիսիլը», էջ 51)։

Հայ ս - պ - ե մ ո լ կ ր ա տ ո ն ե ր ի յ ա ր ա բ ե լ ր ո վ թ ի ւ ն ե ր ը Դ ա շ ն ա կ ց ու -
թ ե ա ն է ս է հ ե տ ա պ ա յ ո ւ մ (Բ. ի շ մ ա ն ե ա ն ի օ ր ո վ) տ հ ա ծ բ ն ա ւ ո -
ր ո ւ թ ի ւ ն ս տ ա ց ա ն : Ն ա խ ա պ է ս պ ա ռ ա կ տ ո ւ մ ը ն մ ա ն է ր մ ե ծ ն ա հ ա -
պ ե տ ա կ ա ն բ ն տ ա ն ի ք ի ց բ ա ժ ա ն ւ ե լ ո ւ « տ ի ս ո ւ ր ա ն չ բ ա ժ ե շ ո ւ թ ե ա ն »,

*). Առաջին համարութեան կրիզիս, 1907թ. էջ 51:

**) ე სახლით, კ. კ. კ. 1908 წ. № 1, էջ 110:

այնպէս որ կարծես, թէ այդ ընկերները «սալբաթ գնացին»... Յիշում ենք նրանց մեծ, կէս թղթի վրա տպւած առաջին յայտագրից մէկ երկու խօսքեր, աւելի ճիշտ նրանց խմաստը՝ «գլուխ ենք խոնարհում Դաշնակցութեան մեծ նահատակների առաջ... բայց անհրաժեշտ է գործել նաեւ կովկասում»:

Առանց տաստանման կարող ենք ասել, որ հայ ս.-դեմոկրատ-ների բաժանումը հսկայական ազգեցութիւն ունեցաւ Դաշնակցու-թեան երիտասարդութեան, աշակերտութեան վրա: Մտքերի շը-փոթութիւն, տարակուսանքներ ստեղծեց: Բայց այդ ամենը տեղի ունեցաւ վերը յիշած նախնական շրջանում: Եւ որքան հայ սոց.-դեմոկրատների գիրքերը ճշտեցին, այնքան ազգեցութիւնը պաղեց ու, վերջ ի վերջոյ, մարեց: Նրանց յարուցած խնդիրների, մօտեցման ու լուծման կերպերի ժառանգութիւնը մնաց զաշնակ-ցական յաջորդ սերունդներին, որով անջատականները, իրենց շեշտաւած ինքնուրոյնութեան հետ մէկտեղ, որոշ գէպքերում եղան սոսկ կրկնողներ,

III

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Սակայն, պահելով հարցը առայժմ «տեղական գործունէու-թեան» նեղ շրջանակներում, չի կարելի ասել, որ Դաշնակցու-թիւնը գերծ էր այդ կարգի գործերից: Պէտք է միայն հաշւի առ-նել այդ գործերի յատուկ շրջաններն ու բնոյթը, այլ կերպ ան- յարեր են դառնում զդգոհութիւնները նրա դէմ եւ ընդդիմադիր շարժումները նոյն ինքն իրեն Դաշնակցութեան մէջ դառնում են «մտացածին» բան, ինչ որ զուրկ է որեւէ բանիմաց հիմքերից:

Դեռ եւս հայ ս.-դ.-ների բաժանումից առաջ, եկեղեցական կալւածքների գրաւման դէպքերի շրջանում, Դաշնակցութիւնը հանդէս եկաւ «Հայ ինքնապաշտպանութեան կոմիտէի» անւան տակ եւ փաստօրէն ինքն էր առաջ տանում շարժումը: Բայց դէպ-քերը սկիզբ առին 1903ի յուլիսին եւ վերջացան նոյն թւի սեպ-տեմբերին: Միաժամանակ կանգ առաւ նաեւ «ինքնապաշտպանու-թեան կոմիտէի» գործը, եթէ չհաշւենք Յարութիւն Սպամեանի ահարեկումը, 1904թ. յուլիս 10ին: Այսպիսով, Դաշնակցութիւնը տօնում էր իրեն հանդէս գտական բացայայտ գործունէութեան, ասպա՝ ար- համ դէմ էր տեղական բացայայտ գործունէութեան, ասպա՝ ար- համ դէմ էր իրեն հանդէս գտական բացայայտ յատուկ գէպքերում:

Հայ սոց.-դեմոկրատների բաժանումից յետոյ Դաշնակցու-թիւնը մէկ քայլ եւս առաջ գնաց: Եւ Երբորդ ինդհամուր Ժողո-վը, որ տեղի ունեցաւ 1904թ. սկզբին, «ընդունելով մէր կաղմա- կը երպութեան մասնակցութեան անհրաժեշտութիւնը կովկասեան յեղափոխական կուր մէջ, որոշեց այդ վարել առայժմ ինքնա- յաշտպանութեան հողի վրա»:

Այս ծանուցմամբ այլեւս սրբեգբուռմ էր բացայայտ կւակ գործեակերպը, որով «ինքնապաշտպանութեան կենտր. կոմի- տէն» կարող էր իր անւան կցել նաեւ «Հ. Յ. Դ.» գրերը եւ գործ-

ածել կնիք։ Դեռ եւս մնում էր միայն «առհասարակ», թէ^o «յատուկ» դէպքերում գործելու խնդիրը։ Եւ այս դէպքում Եղբորդ Ընդհանուր Ժողովի որոշումները քարի պէս պինդ, անզիջող էին։ «Հայ Յեղ. Դաշնակցութիւնը ընդունելով հանդերձ, թէ իր հիմնական նպատակը եղածէ եւ այսօր ալ է Օսմանեան Հայաստանի պատմական դատը, ճանչչւած եւ վաւերացւած միջազգային դաշնագրերով, չի կրնար սակայն անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրաւունքների բոնաբարումի ծանր դէպքերը, որոնք վերջերս տեղի են ունեցած եւ սկսած են յաճախել Թիւրքիային դուրս եւս, սկզբունքով ընդունեց պաշտպանել այդ կարգի իրաւունքները, Տակտիկին վերապահելով որոշել՝ ի՞նչ չափերով կատարել ինքնապաշտպանութեան այդ գործը»։ («Քաղաքածքներ Երրորդ Ընդդարձը ատենագրութիւններէ», Կոմիտէներու համար, 1905, Ժընեվ, էջ 26-27)։

Պարզապէս «չի կրնար անտես ընել», նշանակում էր հակառակ իր կամքին «չի կրնար»։ Սակայն, ցաւը այն էր, որ «ի տես» առածն էլ մի բան չէր, որովհետեւ «մարդկային իրաւունքի բանաբարումի ծանր դէպքերը» ոչ մի առումով յարակցութեան մէջ չէին այդ օրերին կովկասում տիրող դէպքերին, մտայնութեան ու տրամադրութիւններին։ Նախ՝ «իրաւունքի» հասկացողութիւն չկար, յեղափոխութիւն էր։ Յետոյ՝ «ինքնապաշտպանութիւնը» տեղին էր այն դէպքում, երբ յարձակում կայ, եսկ էր չկայ՝ ի՞նչ անես...

Որոշելով այս կարգի ընդհանուր սկզբունքներ՝ ժողովը ճշտում էր մինչեւ անդամ տեղական խմբերի գործունէկութեան սահմանը։ — «Դաշնակցական բանւորական խմբերը, այն գործարաններու սահմաններուն մէջ, ուր անոնք կաշխատին, կը մասնակցին բոլոր բանւորական գործադուներուն եւ շարժումներուն, երբ անոնք կապւած են բանւորներու ընդհանուր վիճակի հետ այդ գործարաններու մէջ։ Իսկ ինչ կը վերաբերի գործարանական կեանքին գուրս ցոյցերուն, որոնք կրնան առաջարկւել ուրիշ կուսակցութիւններու կողմէն, բայց որոնց առիթներն ու նպատակը կրնան տարբեր ըլլալ, իւրաքանչիւր դէպքի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռէ Պատասխանառու Մարմինը» (Անդ)։

Ակնյայտ է, որ կամք չկայ։ Եւ հէնց «կովկասեան գործունէկութեան» հարցին մէջտեղ ընկնելը չարիք է։ Այս չարիքի դիտակցութիւնն է որոշումների շեշտաւծ ընոյթի պատճառը։ Բայց Դաշնակցութիւնը, այսուամենայնիւ, ինքընքը հարկադրած է զգում հեռու հեռու հետեւելու դէպքերին, որքան հնարաւոր է քիչ զիջելու, այդ դէպքերին յարմարւելու ձգտումով։

Սա մի եղբակացութիւն է, որի դէմ առարկելու հիմք չկայ, բայց միաժամանակ մի այնպիսի եղբակացութիւն, որի արժէքը կախւած է նրան տալիք մեկնութիւնից։ Մենք բացէիրաց մերժում ենք Դաշնակցութեան այդ «յարմարւելու քաղաքականութեան» մասին մինչեւ օրս տրւած հակադաշնակցական բոլոր մեկնութիւնները։ Մերժում ենք, որովհետեւ՝ չխօսելով արդարութեան

մասին՝ «նրանց մէջ ճշմարտութեան հետք չկայ»: Բայց «յարմար-ւելու» ոչ այնքան «քաղաքականութիւնը», որքան ճգտումը ընդունում էւ հաստատում ենք, իբրեւ մէկրապարանոց մի փաստ: Կարող ենք ասել մինչեւ անդամ աւելին. Դաշնակցութիւնը ոչ միայն «յետին թւով»՝ յարմարում էր Անդրկովկասի-յեղափոխական դէպլօքերին, այլ եւ խուսափում էր ոռուս միապետութեան հետ գործ ունենալուց: Միայն պէտք է ասել, որ այդ վախը ոչ դաշնակցականի անձի համար էր եւ ոչ էլ չ. Յ. Դաշնակցութեան համար, իբրեւ կուսակցութեան: Եթէ ընդունենք, որ Դաշնակցութիւնը «բուրժուական է», պէտք է ընդունենք նաեւ, որ այդ վախը բուրժուազիայի շահերը վտանգելու համար չէր. Եթէ ընդունենք, որ իբրեւ կուսակցութիւն նա «իմապերիալիստական» է, ապա ուրեմն՝ այդ վախը իմպերիալիստների համար չէր: Առհասարակ, ինչ որակում էլ տալու լինենք Դաշնակցական կուսակցութեան՝ դրանով խնդիրը չի փոխվ, որովհետեւ հարցը «որակման» չէջ չէ, այլ էութեան: Իսկ այդ կուսակցութեան էութիւնը այն է, որ նա՝ թէ՛ անձնական կազմով, թէ՛ կուսակցականորէն անվախ է, հայերէն՝ «աւանդութիւնը» է...»

1904 թւի ամրան սկիզբներին, «Կովկասեան Հայ Աշակերտական Միութեան» գործերով Բագրից եկել էինք Ալեքսանդրապոլ: Երկիր մեկնելու վրա էր Թումանի խումբը, որ բաղկացած էր 60-65 հոգոց: Խումբը իր կազմի մէջ ունէր ընտիր ու փորձառու կուողներ: սարք ու կարդի տեսակէտով առաջին կատարեալ խումբն էր: Հետը ունէր մինչեւ անդամ մի քանի լրատարարաւունիներ: Յուլիսի 2ին, Օլդիի սահմանադրված խումբը նկատեց ուսու կողակների կողմէց: Մանրամասնութիւնները յայտնի են...

Քիչ անցած տիսուր պատեհութիւն ունեցանք լսելու աշուղ ֆարհատի «նոր երգը».—

Քաջ Թումանը
Զլսեց հերոսին՝
Դէմ դնել լորսին.
Օնհւեցա՛ն միասին . . .

Ինչո՞ւ: — Որովհետեւ Դաշնակցութեան գործելակերպը
այդպիս էր... Երկու կրակի մէջ բռնւած թումանը, դիմագրելով
սահմանապահներին, մի՛ զնղակ անդամ չարձակեց թի-
թիւրք սահմանապահներին, վրա կողակների վրա: Որսորդ Գէորգն
կունքից խումբը բնաջնջող ոռւս կողակների վրա: Որսորդ Գէորգն
էր «Պոհւեց միասին», որովհետեւ ուրիշ կերպ վարւել չէր կա-
րող, քանի որ ենթակայ էր թումանին...

բող, քանի որ եսթակայ էր՝
Ուրեմն, ևթէ կամք լինի «քննադատութիւնը» քննադատութիւնից բաժանել եւ ամէն մէկը կիրառել իր տեղում, մէրկ ճըշմարտութեան համար գդւար չի լինի զալ այն եղբակացութեան, որ միապետութեան դէմ չկուելու հարցը բոլորվին կապ չունի ու միապետութեան դէմ չկուելու հարցը բոլորվին կապ չունի ու անձի, ո՞չ կուսակցութեան հետ, կրկնում դաշնակցականի ո՞չ անձի, օրս տրւած բոլոր որակումների ենք, այդ կուսակցութեան մինչեւ օրս տրւած բոլոր որակումների հետ մէկտեղ — եւ այն էլ թէ՛ բոլորը միասին, թէ՛ զատ-զատ :

Սակայն, հարցը բոլորովին տարբերում է երբ կոիւը անհրաժեշտ է «Հայութեան» համար, իր՝ Դաշնակցութեան կարծիքով: Օ՛, այդ գէպքում այլեւս մտածելու, թէութիւնների հարցչկայ — «վասի՞ր»...

Ահաւասիկ եկեղեցական կալւածքների գրաւման գէպքեռու: «Ամէն բան, ամէն բան մէկ կողմը գրէք. բոլոր թափով ելէք միապետութեան գէմ» — ասում էր Արամը, գէպքերից առաջ Բագրւում:

Ահաւասիկ հայ-թրքական ընդհարումների պատուհասը: «Զէնքով թուրք ա — խիեցէ՛ք, գիմադրող ոստիկան ա — խիեցէ՛ք, ո՞վ էլ ըլի — խիեցէ՛ք» — այսպէս էր Նիկոլի մեր ականջներով լսած հրամանը, որ նա տալիս էր առաջին անգամ բաց զէնքով փողոց իջնող մի խումբ փորձառու ահարեկիչների:

Ահաւասիկ նաեւ միապետութեան մեծ ու փոքր՝ գործակալների շանթահարումը: Մի տեղ պամնում է ոստիկան Դարդիքտոնովը, մի ուրիշ տեղ՝ պըհստաւ Ալտչուլը. մի տեղ վիրաւորւաւ է գաւառապէտ Շմերլինդը, մի ուրիշ տեղ շունչն է փչում փոխոնդասիս Անդրէելը. մի տեղ ընկնում է ժանդարմ Դրոգդովը, միւս տեղը՝ գնդապէտ Բըկովը. մի տեղ ոմբահար է լինում գեներալ-հանահանգապէտ Նակաշիձէն, միւս տեղը՝ գեներալ-հանգապատ Ալիխանով-Աւարսկին... Ու մեծ թէ փոքր, գաւառապէտներ՝ Բոդուսյաւսիկի, Պաւլով, Աւալեանի. ոստիկանապետներ՝ Սախարով, Նաշչանսկի, Զաւախով, Շումակեւիչ. լրտեսներ՝ Ուրալով, Կապուտնով, Գնուտով, Խասիեւ, Բարդիեւ. թաղապետներ՝ Սաւանելի, Ֆէոդորով, Պոտշւարով եւ այլն, եւ այլն...

Մնդին գաւառներում խումբ-խումբ, արագ-արագ, ոտքով, ձորերով, սարերով, քաղաքներից գէպի գիւղ, «տունը» պաշտուանելու համար...

Ի՞նչ է սա՝ վախ, թէ՞ յեղափոխութիւն...

Հայապաշտպաննութեան հօր թափն է այդ: Իսկ երբ հարցի պատասխանը այդպէս է դրւում, մարդիկ հմտանում են այնպէս զասաւորել գէպքերն ու նրանց մեկնութիւնները, որից դուրս է գալիս, թէ՝

«Բոլոր լաւ դործերը, որ կատարել է Դաշնակցութիւնը հայ ժողովրդի գործն է, իսկ բոլոր վատ դործերը, որ կատարել է հայ ժողովուրդը՝ Դաշնակցութեան գործն է»:

Ցաւն այն է, որ սրա գէմ ոչինչ չի կարելի առարկել, առաւել եւս, որ Դաշնակցութեան մէջ շատ մարդիկ կատարել են վատ դործեր եւ յետոյ հեռանալով Դաշնակցութիւնից՝ ըննադատել են իրենց այդ դործերը: Միաժամանակ՝ եթէ բաղմաթիւ փաստերով կարելի է հաստատել այս կարգի մտայնութեան ու վերաբերմունքի գոյութիւնը, բնաւ հնարաւոր չէ պնդել, թէ մի ժողովրդի մէջ վատ դործեր չեն լինում, կամ մի կուսակցութեան մէջ լաւ գործեր չեն պատահում:

Այսպիսով մնում է հարց դնել, թէ ի՞նչ է, վերջապէս, Դաշնակցութիւնը կամ հայ ժողովուրդը, եւ խնդիրը վիակել:

Հարցման մէջ արդէն որոշ պատասխան կայ, բայց՝ հրա...

պարակի վրա եղած բոլոր պատասխանների նման՝ նա էլ գոհաց ցուցիչ չէ : Այդպիսին, ի հարկէ, չի կարող լինել նաեւ մեր պատասխանը : Խնդրի շուրջը եղած անվերջ սայթաքումների պատճառները շատ են, մեկնութիւնները՝ երկար : Բնդհանրապէս, մութ ու չուսումնասիրւած մի խնդիր է դեռ : Եւ կազ ունի մի խոչոր շրջանի դէպքերի բարեմիա լուսաբանութեան հետ : Այս վիճակով հարցը մինչեւ օրս նման է մի այնպիսի հասկացողութեան, որը հէնց որ ուղում եւ ճշտել՝ չքանում է : Այդպէս է հին Դաշնակցութիւնը : Ճշտման պլրոցեսում դեռ կարծես թէ հասկացողութիւնը քեզ հետ է, բայց հէնց որ գործդ վերջացաւ, նա արդէն իսկ չքացած է... ու ձեռքդ մնում է մի թղթի կտոր, որի վրա գրել ես, թէ Դաշնակցութիւնը «այս» է, այնինչ բոլորովին էլ այդ չէ ...

Այս է պատճառը, որ հին (նախապատերազմական) Դաշնակցութեան մասին այժմ հնարաւոր չէ վճիռներ արձակել, այլ հարցի լուսաբանութեան համար կարելի է միայն կարծիքներ յայտնել :

Անջատականների կարծիքը այն էր, որ Դաշնակցութիւնը կուսակցութիւն չէ : Եւ, իսկապէս, որեւէ տեղ կուսակցութիւն լինելու համար անհրաժեշտ է, որ նրա կողքին գոնէ մէկ հատ ուրիշ կուսակցութիւն էլ լինի . «մէկ կուսակցութիւնը» կուսակցութիւն չէ, այլ կերպ չքանում է կուսակցութեան հասկացողութիւնը՝ վերածելով հոսանքի, մտայնութեան, շարժման եւ այլն, ինչպիսին եւ է փաստորէն Դաշնակցութիւնը :

Բայց այդ բոլորից Դաշնակցութիւնը մի հիմնական տարրերութիւն ունէր, որ արդիւնք էր միջանցական գրութեան . կուսակցութիւն լինելու համար նա շատ էր, իսկ համայնապարփակ հոսանք լինելու համար՝ քիչ :

Այն հարցը, թէ ինչու հայ կեանքի մէջ միաժամանակ մէկ կուսակցութիւնից աւելին չի եղել (Արմենական, Հնչակեան, Դաշնակցական կուսակցութիւնները փաստորէն յաջորդեցին իրարու), բաց մնացած մի հարց է : Ամբոխային հայեցողութիւնը մեկնում էր այդ Դաշնակցութեան «միահեծանութեամբ», առանց մտածելու, որ նոյն ինքն այդ «միահեծանութիւնը» հետեւանք է միաս կուսակցական վիճակի, որն իր հերթին արդիւնք է հայ կեանքի՝ մէկ կողմէից՝ ընկերային տեսակետից յետամնաց, միւս կողմէից՝ քաղաքականապէս շեշտաւած ու զերակշոր պատմական կայուն մի գրութեան :

Իրեւ հարազատ ծնունդը այդ գրութեան, Դաշնակցութիւնը ոչ միայն կուսակցութիւն չէր, այլ եւ գաղափարի մէջ հիմնաւոր բազէս դէմ էր «կուսակցութիւնների» : Եւ այս դէպքում յանձին Դաշնակցութեան հայ քաղաքական կեանքն էր հանդէս դալիս, որի համար անհրաժեշտ է «միաբանութիւն» : Ժամանակին ամէն որի համար անհրաժեշտ է քաղաքական հոսանքներ կարող էին այդ տարրեր երանդների քաղաքական հոսանքներ կարող էին այդ տարրեր երանդների քաղաքական հոսանքներ կարող էին այդ կուսակցութեան մէջ տեղ բռնել -- «հայ ես՝ դաշնակցական ես» : Կուսակցութեան մէջ տեղ բռնել կուսակցութիւնը հայ յեղափոխական ենրի գաշնակցութիւն էր :

Սակայն, իրբեւ հայ հասարակական-քաղաքական կեանքի տիրական հոսանք, Դաշնակցութիւնը մտաւոր-բարոյական ուսմունք չէր, այլ գործ ու շարժում: Միաժամանակ նա սահմանադրող չէր, այլ գործադրող, յանձնակատար, կտակակատար: Այսպիսով, ինդիր կարող էր լինել Արովեանից, Ռաֆֆից, նրանց նախորդներից, յաջորդներից մնացած «կտակի» հիմնական հարցերի, նրանց գործադրութեան ընդհանուր ուղիների, այսինքն՝ թրքատեացութեան, ոռուսասիրութեան, «Աղասի»ների, «Անդր»երի, «Կարօ»ների, «Դաւիթ Բէկ»երի եւ այլն «Հայողուկային» գործելակերպի՝ եւ ոչ թէ Դաշնակցութեան՝ մասին:

Նրանք, որ տարիներ յետոյ նեղութիւն յանձն կառնեն ծանօթանալու անջատական սակաւաթիւ գրականութեան, կը աեսնեն, որ ինդիրը ա'յդ ձեւով էր զրւած: Անշուշտ, տարածայնութիւնների, վիճարանութիւնների, սուր պայքարի, վոլոյարաբերութիւնների լարւած շրջանում ասւել ու գրւել է շատ բան: Եւ, սակայն, անդամ դրանց բուն հիմքը տեսական անհամաձայնութիւնն է, Հարցերի տարբեր մօտեցումը, լուծումները, հին արժէքների «վերադնահատութիւնը», ինչպէս եւ կոչեցաւ անշատականների ամսադիրը:

IV

«ՆԱԽԱԳԻԾԸ»

ԵՐՐՈՐԴ Բնդհանուր Ժողովի տարտամ որոշումները խիստ աննպաստ գրութեան էին մատնել Դաշնակցութեան մէջ աշխատող երիտասարդութեան՝ այլ ընկերվարական կուսակցութիւնն՝ րի հանդէպ: Ճիշտ է մեղ՝ ժամանակի երիտասարդներիս անյայտ ին այդ որոշումները, բայց ըստ երեւոյթին, նրանց ընդհանուր ոգով էր առաջնորդում Բագրի Կենտ. Կոմիտէն, որի հետ բանուրական շրջաններում աշխատող ընկերները, գրեթէ միշտ, ընդհարման մէջ էին՝ ընթացիկ գործերի շուրջ: Այդ կարգի մի շարք ինդիւններ ունեցաւ Բիրե-է-յրաթի ենթակոմիտէն, որի կազմի մէջ էինք 1905ից մինչեւ անջատում: Բայց Կենտր. Կոմիտէի անդամների մէջ բացառութիւններ կային եւ գրանցից մէկն էր Լ. Թագէունեանը, որը մէկ անդամ «Ճեռքի տակից» դրամական խոշոր փոխառութիւն է արել ենթակոմիտէին «Արամալլը»ի մէկ ծանր գործադրութ յաջողութեամբ պսակելու համար: Արանով, ի հարկէ, չենք ուղում ասել, որ Կենտր. Կոմիտէի մնացած անդամները վկայեալ հակարանուրականներ էին: Ճիշտ չէ այդ ու անյարիր մարդկանց նկարագրի հետ: Երեւոյթը հասկացողութիւնների՝ կամ աւելի ճիշտ՝ անհասկացողութիւնների հետևանք էր:

Այդ գրութիւնը աւելի ծանրացաւ հայ-թրքական ընդհարումների շրջանում: Բուն ընդհարումների ընթացքում վէճ չկար ոչ միայն կուսակցութեան շարքերում, այլ եւ զրոյ հակառակորդ կուսակցութիւնների հետ: Մեր խօսքը ընդհարումներին անմիջապէս յաջորդող օրերի մասին է:

Այսօր, երբ հնարաւորութիւն կայ նոր ու փաստալից ուսումնասիրութեան միջոցով (Ս. Գիւլյանդանեան «Հայրենիք» ամսգ. 1933թ.) կրազեկ դառնալու դէպքերի շարժառիթներին, պատճառներին, այսուեղ աւելորդ է զբանց վրա երկար կանդ առնել: Միապետութեան յաջողւեց հայ յեղափոխական ժողովուրով դէպքերի յործանքից յևս քաշել՝ իր դործերի կագաւորումը դիւրացնելու համար: Բանիմաց հաշիւ էր: Բայց դէպքերի հետեւանքները դրանով չսահմանափակեցին: Նրանք նոր, սեւ «գարագլուխ» բացին հայ ժողովրդի համար, որի ասելիքները յետոյ պիտի իմացէին... Այդ նեղ օրերին, որտեղից որտեղ, «անկոչ հիւրի» պէս, յանկարձ, դուրս պղբաւ «Կովկասեան դործումնէութեան նախադիծը»: Այժմ հաճելի է կարդալ այդ վաւերազիրը, իսկ այն ժամանակ ում ասում էիր՝ կարդացե՞լ ես, ցասումով դոչում էր՝ «դէ՛, էսա, դործում ենք էլի՛, ի՞նչ նախադիծ-մախադիծ»: Եթէ ասէիր, թէ այդ դործը տարրեր է, պիտի բարկանար, թէ՝ հիմա էլ «տարրե՞ր» դուրս եկաւ...

Դէպքերի ընթացքում Դաշնակցութիւնը դարձաւ ազգ եւ պետութիւն. հող (հայկական թաղեր, զիւղեր), իշխանութիւն, ժողովուրդ՝ ազգային-դաշնակցական էր: Հին ու ոխերիմ հակառակորդները «պատաւառը քաղաքացու» վիճակ ունէին — «հայ» էին. վերջապէս: Իսկ նաւթարդիւնարեր հայ բուրժուազիայի ընթացքը դէպի Դաշնակցութիւնը այն էր, թէ՝ «զու ես, որ կաս»: Հասկանալի է, ահաբեկւած էր: Միւս կողմից թուրքը հարուստ-աղքատ չէր հարցնում եւ աշխատում էր, առաջին հերթին, գանակը հորուստի փորը կոխել: Բայց մաներով Դաշնակցութեան հովանուտակ, նա քիչ-քիչ յարմարում էր «նոր միջավայրին» եւ մոռացւած «ազգն» ու «եկեղեցին» արժէք էին ստանում: Դնալով աճում էր յանդզնութիւնը եւ յարմարումը գտնում էր բացայայտ «Դաշնակցականութիւն»: Այս էլ հասկանալի է — վտանգը տեւական բնոյթ էր ստանում: Միաժամանակ ինքնապաշտպանութեան ծանր ու տեւական դործը որոշ կախման մէջ էր գնում Դաշնակցութիւնը այդ բուրժուազիայից ու կատարւում էր այն, ինչ որ անցեալի բովանդակ պատմութեան անյարի էր: Զայրենամերժ հայ բուրժուազիան փող էր տալիս, զէնք էր գնում, զինոր էր պահում, բացառապէս հայ բանուոր էր բանեցնում ու ինքինքը ամէն կերպ բազակիւով՝ «տանկահայակական դատ»ի համար կուրծք էր ծեսպահովելով՝ իսկ այս հողի վրա առաջ էր դալիս նաեւ գաղափարների ներդաշնակութիւն...

Ուժերի, հոսանքների այս փոխազդեցութեան շրջանում, հայ յեղափոխական մտաւորականութեան համար ստեղծուում էր մի խիստ ծանր վիճակ. Դաշնակցութեան մէջ քանակը դանում էր որակ... Կուսակցութեան մէջ այդ հասկանում էր նրա փայուն դէմքերից մէկը՝ Խամբակը եւ «զուման» ու «կուսակցութեան բիւրեղացման» ընդարձակ յօդւածաշարքերով («Երկիր», 1907, հոկտեմբեր) աշխատում էր ելք դանել: Երիտասարդ շարքերում աժմ տեմբեր) աշխատում էր ելք դանել: Դէպքերի ընթացքում մոռացւած, քաղաքացիութիւն էր ստանում, դէպքերի ընթացքում այդ մուրհակը Դաշնակցութեան «նախադիծը»: Ներկայացնելով այդ մուրհակը Դաշնակցութեան

պատասխանատու մարմիններին՝ երիտարբարդներ հատուցում էին սպահանջում։ Միւս կողմից «նախագիծը» դեռ նախագիծ է, որ «առաջարկւած է զաշնակցական մարմիններին եւ ընկերներին իրենց դիտողութիւնները յայտնելու՝ Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար»։ Եւ միաժամանակ աճում է «Հականախագծական» կամ Միհրանական շարժումը, որ նախագէս ջինջ, զափիարական շարժում էր։ Անդորրծ չէ նաեւ Դաշնակցութեան մէջ բոյն դրած բուրժուազիան։ Հաղիւ-հաղ աղասոած թուրք-թաթար միապետական բլոկի սարսափներից՝ այժմ նա կանգնել էր մի նոր վտանգի առջեւ՝ ընկերվարութիւնը։ «Եղբայրը եղրօ՞ր դէմ» եւ այն էլ ա'յալիսի պայմաններո՞ւմ, Դաշնակցութեան միջոցով, այդ ո՞ր օրից սկսած եւ ի՞նչ հիմքերով, իսկ «Հին ծրագի՞րը», «ազգային հա՞րցը», «տաճկահայկական գա՞տը»... Եւ նո նոր պատւանդան, նոր բոյն, նոր ոյժ է վնտրում Դաշնակցութեան շարքերում։ միհրանական շարժումը կ առնում է բուրժուազատական ձգտումների յենարան, իսկ «Մշակ» թերթը պարզում, մե՛ռ նարանում է «պլատֆորման»։ — «ինքնապաշտպանութիւն Կովկասում, յեղափոխութիւն միայն Տաճկահայաստանում»...

«Դարերից ի վեր հայկական համագային անդորրը լճի մէջ նեխւած ջրերը այսօր իրար են անցել եւ տարբեր հոսանքները իրար են զարնուում չտեսնւած, զոնէ քրիստոնեայ մարդու համար չտեսնւած ուժնուութեամբ», զրում էր Մուտեանը։ Եթէ «դարերից ի վերը» դուրս հանենք, մնացածը իրողութիւն է։ Եւ աչի հարցը, թէ ինչպէ՞ս պէտք է զուրու ելնել այդ «նեխւած ջրերի» միջից Մուտեանը պարզաբանում է իր առաջին գրքոյի մէջ, որու կրում է «Ժամանակ է սրափնելու» վերտասութիւնը։

Պրագա

(Վերջը յաջորդ անգամ)

